28.04.2016

Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և պայմանագիր կնքելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց ցանկը

1. **ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.**

   - պետական գրանցման վկայականի պատճենը՝ բոլոր ներդիրներով
   - եթե պայմանագիրը ստորագրում է պետական գրանցման վկայականում չնշված անձ, ապա պայմանագիրը ստորագրող անձի լիազորությունները հավաստող փաստաթղթի (նշանակման վերաբերյալ որոշում/հրաման, լիազորագիր) պատճենը
   - անհրաժեշտության դեպքում ԷԿԵՆԳ-ը կարող է պահանջել ներկայացնել նաև կանոնադրության պատճենը:

2. **Պայմանագիր կարող են կնքել հետևյալ իրավաբանական անձինք.**

   2.1. ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված և (կամ) լիցենզավորված բանկերը, օտարերկրյա բանկերի հայաստանյան մասնաճյուղերը, վարկային բյուրոները, ապահովագրական բյուրոները, դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները, վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները (ապահովագրական բրոքերները), ներդրումային ընկերությունները, արժեթղթավորման հիմնադրամները, ներդրումային ֆոնդի կառավարիչները և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերը, արժեթղթերը կարգավորող շուկայի օպերատորները, կենտրոնական դեպոզիտարիան, վարկային կազմակերպությունները, գրավատները, ներդրումային ֆոնդերը և կենսաթոշակային ֆոնդերը,

   2.2. հանրային ծառայություններ՝ էլեկտրաէներգիա, գազամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում և հեռահաղորդակցություն (էլեկտրոնային հաղորդակցություն), մատուցող ընկերությունները:

Վերոնշյալ իրավաբանական անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- լիցենզավորման ենթակա գործունեության լիցենզիայի պատճենը
- պետական գրանցման վկայականի պատճենը՝ բոլոր ներդիրներով
- եթե պայմանագիրը ստորագրում է պետական գրանցման վկայականում չնշված անձ, ապա պայմանագիրը ստորագրող անձի լիազորությունները հավաստող փաստաթղթի պատճենը
- անհրաժեշտության դեպքում ԷԿԵՆԳ-ը կարող է պահանջել ներկայացնել նաև կանոնադրության պատճենը: